# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2017թ-ի հունվարի 9-ին կնքված ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի նոյեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը և ձեռքբերելու Պայմանագրով նախատեսված լրացուցիչ ծառայություններ:

Փոփոխության նկարագրություն: Երկարաձգվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանվելով մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

Փոփոխվել է Պայմանագրի գինը և ավելացվել է Պայմանագրի գումարը 8 073 000 (ութ միլիոն յոթանասուներեք հազար) ՀՀ դրամով, այն սահմանվելով 96 873 000 (ինսունվեց միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:

Հաստատվել է ավելացվող ծառայությունների ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 60-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

# Համաձայնագիր-2
# 09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք.Երևան** «29» Հոկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 60-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով, հիմք ընդունելով 09.01.17թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Պայմանագրի 7.4 կետին համապատասխան երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, այն սահմանելով մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

1.2 Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 8 073 000 (ութ միլիոն յոթանասուներեք հազար) ՀՀ դրամով, այն սահմանելով 96 873 000 (ինսունվեց միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:

1.3. Հաստատել ավելացվող ծառայությունների ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կա պետական եկամուտների կոմիտե | «Յուքոմ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Երևան, Տերյան 19, բն. 4 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00024873 |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 1570043102134100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱմերիաԲանկ» ՓԲԸ |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | «Յուքոմ» ՍՊԸ-ի կորպորատիվ |
| Ա.Սահակյան | վաճառքի բաժնի ղեկավար՝ |
| | Կ.Ասատուրյան |

Հավելված
Հաստատված է
«09» հունվարի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-2-15/18
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ | 4232 | | | | | | | | | | | 8 073 000 | **8 073 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ կա պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 1570043102134100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
«Յուքոմ» ՍՊԸ-ի կորպորատիվ
վաճառքի բաժնի ղեկավար՝
Կ.Ասատուրյան